ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/35463-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի՝

1. 63-րդ հոդվածի 1-ին մասի, առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Վրաստանի Կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» (Կ-869-18.06.2024-ԱՀ-011/0) և «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Թունիսի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» (Կ-864-14.06.2024-ԱՀ-011/0) օրենքների նախագծերը ընդգրկել Ազգային ժողովի 2024 թվականի հոկտեմբերի 22-ից գումարվող հերթական նիստերի օրակարգ,

2. 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում դրական եզրակացություն ստացած՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում

փոփոխություններ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին (Կ-911-10.09.2024-ՖՎ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի քննարկումն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաջորդ՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ից գումարվող հերթական նիստերի օրակարգ՝ զեկուցողի գործուղմամբ պայմանավորված:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ